

կան իշխանութիւնը այլեւս իր անկման ճամբուն մէջ մտած էր եւ, սահմարձակ աւազակարոյն մը դարձած էր, բոլորովին զրկուած ժՉ դարու սուլթաններուն գոնէ քիչ շատ զգալի հետադարձութենէն եւ առեւտուրի հանդէպ բարեացակամութենէն :

«Սկսեալ ի 1626 ամէ ց1723 ամն Հայք Ջուդայու կատարէին զառեւտուրս խամ (հում) մետաքսիք՝ թանկագին գոհարօք՝ մարդարտօք՝ 3) եւ ձեռագործօք այլ եւ ապրանօք Պարսկաստանայ եւ Հնդկաստանի ի Տէրութեանն Ռուսաստանի: . . . . . եւ ի սկսանիլ ի Ռուսաստան մեքատեսայ ձեռագործաց, տարեալ եղեն ի Ջուդայոյ Հայ արհեստաւորք սակս տալոյ զերանդս մետաքսից եւ վասն ուսացանելոյ Ռուսաց գայն արհեստ»: 4)

Պատմական փաստ է, որ 1667-ին ցար Ալէքսի Միհայիլովիչը «հայ վաճառականներու ընկերութեան մը համար նաև մը կառոյց գանձնք պաշտպանելու համար ծովահէններէ (Վոլկայի վրայ)»: 5)

Անտարակոյս, կը գտնուին Ռուսական դիւաններուն մէջ բազմաթիւ վաւերաթուղթեր, որոնք պիտի կարենան մեծ եւ կարեւոր լոյս սփռել հայեւոսն առեւտուրի պատմութեան այս մութ շրջանին վրայ: Նոյնպէս հաւանաբար ըլլան թղթածրարներ էջմիածնայ նախկին դիւանին մէջ, որ այժմ Սորհրդային Հայաստանի պետական սեփականութիւնն է: Գծարխտաբար, առ այժմ անոնցմէ օգտուելու յոյս չունիմ: Անտարակոյս, աւելի լաւ օրերու եւ աւելի լաւ պատեհութեանց հետ կարելի պիտի ըլլայ շատ նման օգտակար ձեռնարկներ գրուիլ հանել:

Այժմ քանի մը խօսք ալ Հնդկահայ մետաքսավաճառութեան մասին:

Պարսկաստանէն հոն անցած հայ առեւտրականներ անչուշտ վազուց մետաքսի առեւտուրով կը զբաղէին՝ Հնդկական մետաքսը

3) Պատրաստ է իմ «Թանկագին քարերու առեւտուրը եւ Հայերը» գործս, որ կը յուսամ թէ այս իսկ էջերուն մէջ հրատարակուի:

4) Պատ. Նոր Ջուդայու, էջ 176:

5) The Hakluyt Society. — I. Series, Vol. 72, p. 58:

սը նախ Պարսկաստան եւ անկէ ալ Եւրոպայ անցնելով, — բան մը որ ունենալու է իր պատմութիւնը:

Շատ նիւթ չունինք այս մասին, սակայն եղածն իսկ, օտար ազդիւրներէ հայթայթուած, բաւական լաւ ուրուագիծ մըն է Անգլիական Արեւելեան Հնդկաց ընկերութեան եւ Հնդկահայ վաճառականներու միջև:

«Կառավարիչ եւ Արեւելեան Հնդկաց մէջ առեւտուր ընող Լոնտոնի Վաճառականաց Ընկերութեան կողմէ, բոլոր անոնց, որոնց ներկայացուի այս ողջոյն»:

«Մեզի կատարուած տեղեկութեանց հիմամբ, կատարուած Սըր Ճօսիա Չայլտ, Պարոնէթ, մեր փոխ-կառավարիչը, ըստ անոր երկար խորհրդակցութեան, Սոճա Փանոս Քաւանթարի հետ, երեւելի Հայ վաճառական մը եւ ընտելի Սպահանի Պարսկաստան, եւ նաեւ Սըր Ճան Շարաէնի ի Լոնտոն, ասպետ: Անոնք յանուն Հայ ազգի առաջարկեցին անոր կարգ մը պայմաններ Հնդկաստանի եւ Պարսկաստանի Հայ առեւտուրի մեծ մասը փոխադրելու համար, անկէ Եւրոպայ, Անգլիոյ վրայով, որ նորին Վեհափառութեան (Անգլիոյ թագաւորին) համար մեծ առատութեամբ առաւելութիւն պիտի բերէ իր մաքսատանց եւ պիտի աւելցնէ Անգլիական նաւազնացութիւնը, եթէ Հայ ազգը գուցէ ստանայ այնպիսի արտօնազիւր այս ընկերութենէն, որ անոնց պիտի ապա քաջաբերութիւն փոխելու եւ դարձնելու համար Եւրոպան իրենց ետ ու դարձ առեւտուրին հին ուղին: Եւ մենք միշտ կամեցող ըլլալով աւելցնելու եւ քաջաբերելու հասարակային առեւտուրը եւ նաւագնացութիւնը այս թագաւորութեան (Անգլիոյ), լուրջ վեճարանութենէ մը վերջ այս ինդերոյն շուրջ բոլոր առաջարկութեանց մասին, յարմար դատեցինք համաձայնիլ եւ վճելի հետեւեալ կերպով. —

«Առաջին. — Հայ Ժողովուրդը այժմ, եւ ասկէ վերջ միշտ, հաւասար իրաւունք եւ օգուտ ունենայ այս Ընկերութեան ունեցած կամ ունենալիք եւ ասկէ վերջ չնորհուած բոլոր թոյլտուութիւններէն որեւէ մէկին իրենց (ընկերութեան) յատուկ արկածախնդիրներուն կամ ուրիշ Անգլիացի վաճառականներ